

ԱՆՂԱՍՏԱՆ

Անղաստանը աշխարհի չորս ծագե-
րու օրհներգութեան նուիրուած արարո-
ղութիւն մըն է: Ժամանակին ան կը
նուիրուէր արտերու եւ անղաստաններու
պտղաբերութեան համար: Այդ օրերուն,
Անղաստանը կը կատարուէր եկեղեցիէն
դուրս՝ արտերու եւ այգիներու մէջ: «Ան-
ղաստան ելլել» կամ «Անղաստան օրհ-
նել» կը նշանակէ աշխարհի չորս կողմե-
րը օրհնել: Արարողութեան ժամանակ,
հոգեւոր դասը խաչով, խաչվառով եւ Ա-
ւետարանով երգելով կ'օրհնէր արեւելքը
եւ այդ կողմ գտնուող Հայոց հայրապե-
տութիւնը՝ Սուրբ խաչի եւ Աւետարանի
նշանով, յանուն Սուրբ երրորդութեան:
Ապա կ'օրհնուէր եւ պահպանման խնդ-
րանք կը ներկայացուէր աշխարհի արեւ-
մրտեան կողմի համար, ուր Քրիստոնե-
այ թագաւորութիւններ եւ ազգեր
կային: Դէմքերը դէպի հարաւ դարձը-
նելով՝ կ'օրհնէին հարաւը, այնտեղ
գտնուող երկիրները, անղաստանները
եւ տարուան պտղաբերութիւնը: Դէպի
հիւսիս դառնալով կ'օրհնէին վերջապէս
հիւսիսային կողմը գտնուող վանքերը,
անապատները, քաղաքներն ու գիւղերը
եւ անոնց բնակիչները:

Ներկայիս Անղաստանը կը կատար-
ւի եկեղեցւոյ ատենէն ներս, այսինքն
եկեղեցւոյ մէջտեղը: Գիրքի ընթերցումէն
ետք, բոլոր ներկայ եկեղեցականները
շուրջառններով կը զգեստաւորուին: Հան-
դիսապետը խաչն ու գաւազանը կ'առնէ
եւ կը կենայ եկեղեցւոյ մէջտեղը: Միւս
եկեղեցականները կ'առնեն խաչը կամ Ա-
ւետարանը, հանդիսաւոր օրերուն նաեւ
այլ մասունքներ՝ եւ կը կենան հան-
դիսապետին կողքին, եկեղեցւոյ մէջտեղ,
դէմքերը դարձած դէպի արեւելք: Բուր-
վառակիր սարկաւազը, մոմակալները եւ
միւս սարկաւազները վառած մոմերը
բռնած կը տեղաւորուին ատենանին եզեր-
քը, եկեղեցականներուն դիմաց, դէմքերը
դէպի Արեւմուտք: Իսկ դպիրները ձեռքեր-
նին մէկական վառած մոմ՝ կը շարուին
բեմին առջեւ, դէմքերը դէպի Արեւմուտք:

ԳԱՌ ԱՍՏՈՒԾՈՅ



«Ահաւասիկ Աստուծոյ գառնուկը,
որ աշխարհի մեղքը կը վերցնէ» (Յովի-
Ա. 29):

Ս. Աւետարանէն քաղուած համար
մըն է այս, արտասանուած Ս. Յովիան-
նէս Մկրտիչի կողմէ:

Ոչխարն ու գառնուկը ընդհանրա-
պէս խորհրդանիշ նկատուած են բա-
րութեան ու անմեղութեան: Ամէն
վայրկեան մատաղ դառնալու՝ գոհ-
ւելու պատրաստ կենդանին է անիկա:
Եւ Յովիաննէս Մկրտիչ մարգա-
րէանալով կը գուշակէր, թէ Յիսուս
որպէս Աստուծոյ Գառնուկը պիտի
գոհուէր, պատարագուէր մարդոց
մեղքերուն համար:

Գառն Աստուծոյ պատկերը, որպէս
խորհրդանիշ Քրիստոսի, կը տեսնենք
նշխարներու վրայ եւ կամ Ս. Սկիհի
գանազան ծածկոցներուն՝ դաստառակ-
ներու վրայ:

Ուշագրաւ երեւոյթ է, որ հայրա-
պետական պատարագներուն, երբ Վե-
հափառ հայրապետը թափօրով եկեղե-
ցի կ'առաջնորդուի, ամպհովանիի ան-
միջական առջեւ երկու սարկաւազներ
կ'առ վարդապետներ բռնած կ'ըլլան
Գառն Աստուծոյն, գեղահիւս, ոսկեթել
ասեղնագործութեամբ Վեհափառ հայ-
րապետի հայացքին դիմաց:



ԲՈՒ ԽՈՍԵՂ ԽՆ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՆ ԶԱՒԻՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(Ս. 119-105)

ԺԵ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 17 ԱՊՐԻԼ 2022 ԹԻՒ 16

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Գրծ. 1.15-26: Սր. 16.1-8

ԶԱՏԻԿ: ՏՕՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՆՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 16. 1-8

Շաբաթ օրը երբ անցաւ, Մարիամ Մագդաղենացին, Մարիամ՝ Յակոբի
մայրը եւ Սողոմնէն գացին խունկեր գնեցին եւ պատրաստեցին, որպէսզի երթան
եւ օժեն Յիսուսի մարմինը: Կիրակի առաւօտ կանուխ արեւածագին գերեզման
եկան: «Ո՞վ պիտի գորէ գերեզմանի մուտքին դրուած քարը», կը հարցնէին
իրարու, որովհետեւ քարը շատ մեծ էր: Սակայն երբ նայեցան, տեսան, որ քարը
արդէն իսկ զլորուած էր: Գերեզմանէն ներս մտան եւ ճերմակ զգեստ հագած
երիտասարդ մը տեսան, որ աջ կողմը նստած էր: Մարսափեցան: Երիտասարդը
ըսաւ անոնց. «Մի՛ վախնաք, զիտեմ, որ խաչուած Նազովրեցի Յիսուսը կը
փնտռէք, բայց հոս չէ, յարութիւն առաւ: Տեսէք զինք հոս դրած էին: Այժմ գացէ՛ք,
ըսէ՛ք իր աշակերտներուն եւ Պետրոսի, որ ահա Յիսուս ձեզմէ առաջ կ'երթայ
Գալիլիա: Հոն պիտի տեսնէք զինք, ինչպէս որ ըսած էր ձեզի»:

Երբ ասիկա լսեցին, դուրս փախան գերեզմանէն, զարհուրած եւ ապշահար,
ու ոչ մէկուն բան մը ըսին, որովհետեւ կը վախնային:

Աստուած իր Որդիին խաղաղութիւնը տուաւ մեզի

«Մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ դրուեցաւ» (Ես. 53.5): Աստուած
առաւ մեր մեղքերուն պատճառած խռովութիւնը եւ զայն դրաւ Քրիստոսի վրայ,
եւ առաւ Քրիստոսի խաղաղութիւնը եւ զայն դրաւ մեր վրայ: Քրիստոսի
կապուած մարդը իր սրտին մէջ կը կրէ այն խաղաղութիւնը, որ Քրիստոս
ինք ունէր: Քրիստոսապարզեւ խաղաղութիւնը ո՛չ միայն մեզ խաղաղ կը պահէ
փորձութեանց դիմաց, այլեւ՝ յաղթող կը դարձնէ անոնց դէմ: Կեանքի ծովերը
միշտ կրնան փոթորկիլ եւ սարսափի ու յուսահատութեան մատնել մարդիկը,
բայց անոնք որոնք Աստուծոյ գաւակներն են, անոնք անվրդով կերպով կը
շարունակեն իրենց հաւատքի զնացքը յաղթականօրէն:

ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ



Զատիկ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եկեղեցական օրացոյցին մէջ այսպէս անջատ կերպով յիշուած են Զատիկը եւ Յարութիւնը:

1.- Ի՞նչ է Զատիկը քանի՞ն իմաստը:

Զատիկ բառը ունի բազմաթիւ բացատրութիւններ: Ոմանք նմանութիւն կը գտնեն Եբրայեցիներու Պասեփին (Passover) հետ: Պասեփ կը նշանակէ ելք: Հրեաներու ամենամեծ ու յարգուած տօներէն մէկն է Պասեփը: Անոնք կը յիշատակեն Եգիպտոսի ծանր լուծէն իրենց ազատիլն ու ելքը: Իսկ մենք՝ քրիստոնեաներս, Յիսուսի չարչարանքի արդիւնքով հրաշափառ Յարութեամբ կը յիշատակենք մարդկութեան մահուան իշխանութենէն ու սատանայի ծառայութենէն դուրս գալը եւ երկինքի արքայութեան արժանի դառնալը: Յիսուսի կեանքին վերջին դրուագները տեղի ունեցան հրեաներու Պասեփի տօնին:

2.- Զատկուան ժողովրդական սովորութիւններ:

Զատկուան ժողովրդական սովորութիւններէն կարելի է յիշատակել հաւկիթը կարմիր ներկելը եւ հաւկրթախաղը:

Հիները հաւկիթը կ'ընդունէին իբրեւ տիեզերքի խորհրդանշան եւ կը հաստատէին, թէ հաւկիթին կեղեւը կը նշանակէ ցամաքը, սպիտակը՝ ջուրը, դեղնուցը՝ կրակը:

Սովորութիւն էր գարնանամուտի օրը իբրեւ ընծայ իրարու հաւկիթ տանիլ, մանաւանդ կարմիր: Նաեւ ոսկիէ կամ արծաթէ շինուած կարմիր հաւկիթներ կը տարուէին իշխաններուն, իբրեւ հպատակութեան նշան: Ասիկա արեւելի մէջ, մանաւանդ հայերուն եւ պարսիկներուն մօտ:

Բոլոր կրօններուն մէջ ալ հաւկիթը իր կարեւոր տեղը ունէր, մինչեւ իսկ Հռոմէացիները եւ յոյները հաւկիթ կը նուիրէին իրենց աստուածներուն՝ սրբելու եւ մաքրելու համար:

Հրեաները Պասեփի տօնին կը պատրաստէին բաղարջ հաց(առանց թթւմորի հաց): Պասեփի սեղանին վրայ անպայման պէտք էր ըլլար նաեւ գառկական գառնուկը եւ պինդ խաշուած հաւկիթը:

Հաւանաբար Պասեփի այս սովորութիւնը փոխանցուեցաւ քրիստոնեաներուն:

Զատկական հաւկիթը Քրիստոնեային համար խորհրդանշան է այն ժայռէ գերեզմանին, ուրկէ Քրիստոս Յարութիւն առաւ:

3.- Ինչո՞ւ հաւկիթը կարմիր կը ներկեն:

Կարմիր ներկը անցեալին ամէն տեղ չէր գտնուեր: Յայտնի է, թէ կարմիր ներկին հայրենիքը Արեւելքն է, ուր կը գտնուի որդան կարմիրը, որմէ կ'արտադրուէր կարմիր ներկը եւ կը տարածուէր ամբողջ աշխարհին մէջ:

Հաւկիթը կարմիր ներկելու աւանդութիւնը կը բացատրուի հետեւեալ ձևով: Նախ կարմիրը սիրոյ գոյն է: **Նրկորդ**՝ հայերը բնապաշտ ժողովուրդ եղած են, եւ բնութեան մէջ գերընտիր բերքն է որդան կարմիրը: Ինչպէս, որ բնութեան ծննդաբերութիւններուն մէջ հրաշալի է հաւկիթը, ուստի հաւկիթը կարմիր ներկելով նուիրագործած են գայն: **Նրորդ**՝ հաւկիթը կարմիր կը ներկուի, որպէս ուրախութեան նշան: **Չորորդ**՝ կարմիրը կը խորհրդանշէ նաեւ, որպէս գոհի արիւնը, որ կը բացատրուի իբրեւ Քրիստոսի թափած արիւնը աշխարհի փրկութեան համար:

Հաւկիթը կը ներկեն Զատկուան նախորդ օրը՝ Շաբաթ օր:

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՄԸ ԴԱՐՁԱ՞Ծ ԵՍ ԿԻՐԱԿԻԻ ԶԱՄԱԿ

Քրիստոս Կիրակի օր առաւօտ կանուխ յարութիւն առաւ: Իւզաբէր կիները իրենք եւս Կիրակի առաւօտ կանուխ գերեզման եկան: Եկան յաւիտենապէս ԿԵՆԴԱՆԻՆ գերեզմանին մէջ փնտռելու, եւ ահա ԿԵՆԴԱՆԻՆ մէկ դէսպանը անոնց երեցաւ եւ ըսաւ. «Ինչո՞ւ ողջը մեռելներուն մէջ կը փնտռէք: Հոս չէ ան. Յարութիւն առաւ»: Քրիստոսի յարութեամբ դադրեցաւ հին Շաբաթը եւ սկսաւ նոր Շաբաթը՝ Կիրակին, դադրեցաւ Հին Ուխտը եւ սկիզբ առաւ Նոր Ուխտը, դադրեցաւ Հին Իսրայէլը եւ կեանքի կոչուեցաւ Նոր Իսրայէլը՝ մենք, վերջ դրուեցաւ հին ստեղծագործութեան եւ սկիզբը դրուեցաւ նոր ստեղծագործութեան, նոր մարդկութեան:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Սիրելիս, Քրիստոսի յարութեամբ դարձա՞ծ ես Աստուծոյ նոր ստեղծագործութիւնը, դարձա՞ծ ես Կիրակիի զաւակ, այսինքն՝ յարութեան ու յաղթանակի զաւակ, 57 դարձա՞ծ ես Նոր Ուխտի որդի, այսինքն՝ հաշտութեան որդի, հաշտուած որդի, Աստուծոյ որդի:

ԱՌԱՎ

Ո՛վ երիտասարդներ, ձեր հօրը խրատը լսեցէ՛ք, մտի՛կ ըրէ՛ք, որպէսզի ճանչնա՛ք իմաստութիւնը, որովհետեւ ես բարի շնորհներ պիտի պարգեւեմ ձեզի: Մի՛ հեռանա՛ք իմ օրէնքներէս, որովհետեւ ես եւս հնազանդ զաւակ էի հօրս եւ սիրելի՛ մօրս աչքին: Առկ. 4.1-2

ԵՅԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

«Բարձրելոյն ծածկոցին տակ բնակողը Ամենակարողին հովանաւորութեանը տակ պիտի հանգչի»:

Սաղ.91.1

Աստուծոյ կամքին մէջ մնալ կը նշանակէ կատարեալ ապահովութեան մէջ բնակիլ, ամէն պարագայի տակ: Դաւիթ Աբիաթարի ըսաւ. «Իմ քովս նստէ՛, մի վախճար, քանզի իմ հոգիս փնտռողը քու հոգիդ ալ կը փնտռէ, բայց դուն իմ քովս ապահով ես» Ա. Թագ. 22.23: Ասիկա իննիսուն մէկերորդ Սաղմոսի ճշմարիտ թարգմանութիւնը չէ՞ միթէ: Աստուծոյ կամքին մէջ ըլլալ ըսել է Ամենակարողի թելերուն տակ ըլլալ, ուր հաւատացեալը վստահութեամբ կը հանգչի կատարեալ ապահովութեան մէջ: Հոն թշնամին ի գուր կը ջանայ մեր ոտքերը առնել ցանցերու եւ նինգերու մէջ եւ արգիլել մեր գնացքը, կամ տասպալել մեզ: Աստուածային նուիրական ներկայութեան մէջ չեն կրնար թափանցել չարին մահացու նետերը, գիշերուան զարհուրանքը, ոչ ալ մութ տեղը պտղտող ժանտամահը: Հոն մենք կարող պիտի ըլլանք առիւծի եւ իծի վրայ քալել ու վիշապը կոխկրտել:

Աստուածայինին հետ ճշմարիտ յարաբերութիւնը դարձան է մեր բոլոր մտահոգութիւններուն, որոնք ոչ միայն անօգուտ են, այլ մեզ կը հիւանդացնեն բոլոր այն վախերով, որոնք նոյնիսկ կրնան բնաւ չի պատահիլ: